ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար հակահրդեհային սարքերի վերանորոգման-պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-24/02» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2024 թվականի ապրիլի 23-ին կնքված N «ԴԴ-ԳՀԾՁԲ-24/02» պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2026 թվականի հունվարի 23-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար հատկացվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն՝

Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ N 2 հավելվածը հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 7.5 և 7.13 կետեր

Պատվիրատու՝ Դատական դեպարտամենտ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 9

23.04.2024թ. ԿՆՔՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ-ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ԴԴ-ԳՀԾՁԲ-24/02» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան « 23 » « 01 » 2026թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՍՕՍ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Ծատուրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 23.04.2024թ. կնքված N «ԴԴ-ԳՀԾՁԲ-24/02» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով Պայմանագրով սահմանված 76 463 957 (յոթանասունվեց միլիոն չորս հարյուր վաթսուներեք հազար ինը հարյուր հիսունյոթ) ՀՀ դրամ առավելագույն գնից 3 584 953 (երեք միլիոն հինգ հարյուր ութսունչորս հազար ինը հարյուր հիսուներեք) ՀՀ դրամի չափով ֆինանսական միջոցների առկայությունը և Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման անհրաժեշտությունը.

1.1. Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ N 2 հավելվածը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի N 1 հավելվածի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

Համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև Համաձայնագիրն ուժի մեջ մտնելը՝ 05.01.2026թ. կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում Կատարողի կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարումն իրականացվում է Համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2.2. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Համաձայնագիրը կազմված է 3 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի N 1 հավելվածը հանդիսանում է N 9 համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Դատական դեպարտամենտ

Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1

ՀՎՀՀ՝ 02583241

Հ/Հ՝ 900011192151

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Ն. Գալստյան

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ՍՕՍ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ

Հասցե՝ ք. Երևան, Հր. Ներսիսյան փ.ՓԿՂ./Շ/1/103 տարածք

ՀՀՎՀ՝ 02605138

Հ/Հ՝ 1930041816500100

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Վ. Ծատուրյան

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 1
« 23 » « 01 » 2026թ. կնքված N 9 համաձայնագրի

(Հավելված N 2
« 23 » « 04 » 2024թ. կնքված
«ԴԴ-ԳՀՇՁԲ-24/02» ծածկագրով պայմանագրի)

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	ընդամենը
1	50411190/2	հակահրդեհային սարքերի վերանորոգման-պահպանման ծառայություններ	3584953	3584953	3584953	3584953	3584953	3584953	3584953	3584953	3584953	3584953	3584953	3584953	3 584 953

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Ս. Գալստյան

(ստորագրություն) Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ՍՕՍ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Հր. Ներսիսյան փ.ՓԿՂ./Շ/1/103 տարածք
ՀՀՎՀՀ՝ 02605138
Հ/Հ՝ 1930041816500100
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Վ. Ծատուրյան

(ստորագրություն) Կ.Տ